ՄԵՆՔ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ

(ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ III «ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆՔ ՃԱՆԱՉԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ» ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ՀՈՎՀ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՄԼ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ)

2021 թ. մարտի 20-21-ին Կրասնոդարում կայացավ ՌԴ Հայոց լեզվի և Հայրենագիտության ուսուցիչների 3-րդ «ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՆՔ ՃԱՆԱՉԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ» խորհրդակցությունը, որին մասնակցում էին 48 պատգամավորներ 40 քաղաքներից: Խորհրդակցությանը մասնակցում էր նաև Դոնի Ռոստովի հայ համայնքի հայոց լեզվի ուսուցիչների պատվիրակությունը (Սոնա Կարապետյան, Լուսինե Պետանյան, Ռուզաննա Կարապետյան Արմինե Ղազարյան, Ծովինար Սարգսյան), նաև Մյասնիկյանի շրջանի հայոց լեզվի ուսուցիչները (Հռիփսիմե Վարդևանյան, Ոսկեհատ Դոլոբայան, Անահիտ Հարությունյան, Արմանուշ Հայբարյան):

Խորհրդակցության նպատակն էր. ա/ քննարկել ՌԴ հայկական դպրոցներում, կենտրոններում և լրացուցիչ կրթության օջախներում ուսուցողական և մշակութային գործընթացների իրականացման միասնական ծրագրերի և մեթոդների ստեղծման հարցը, բ/ ուրվագծել նոր իրավիճակով պայմանավորված առաջնահերթությունների և նոր շեշտադրումների կտրվածքում հայեցի կրթության դերի բարձրացումը, գ/ ձևավորել և զարգացնել ներդպրոցական կապեր, համախմբվածություն ընդհանուր հայրենասիրական իդեալների, ազգային գաղափարախոսության, հավատի և եկեղեցու շուրջ, գ/ Կրասնոդարի Երկրամասի Տարածաշրջանային Հայկական Ազգային-մշակութային Ինքնավարության հիմքի վրա ստեղծել հայեցի կրթության և դաստիարակության ջատագովների գործուն հարթակ:

Ստորև ձեզ ենք ներկայացնում բան. գիտ. թեկնածու, հայոց լեզվի դասագրքերի հեղինակ, խորհրդաժողովի նախաձեռնող ու կազմակերպիչ ԵՐԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՈՒՄ կամ ՈՒԺԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ» ուսանելի ելույթը:

Հայկական դպրոցն ունի հնամյա ավանդներ, իսկ Սփյուռքը մայրենի լեզվի դասավանդման հարյուրամյա փորձ: Սակայն, կրթական համակարգը հարափոփոխ է: Յուրաքանչյուր ժամանակաշրջան թելադրում է նոր անելիքներ, և այստեղ կարծրատիպեր լինել չեն կարող:

Ներկայումս Սփյուռքում գործում են ամենօրյա 4 տիպի շուրջ 400 կրթական հաստատություններ տարրական, թերի միջնակարգ (նախակրթարան), միջնակարգ (երկրորդական) և բարձրագույն (լիցեյ, քոլեջ), շուրջ 600 մեկօրյա (շաբաթօրյա կամ կիրակնօրյա) դպրոցներ: Սփյուռքի գրեթե բոլոր հայկական ամենօրյա դպրոցները մասնավոր են ի տարբերություն կիրակնօրյա դպրոցների, որոնք, այնուամենայնիվ, չեն կարող բավարարել ազգային դաստիարակության և կրթության պահանջները:

Պետք չէ խեղաթյուրել կամ քողարկել պատմական իրադարձությունները, ուղղակի անհրաժեշտ է անել ճիշտ շեշտադրումներ:

Նախ առաջադրեմ այն եզրույթները, առանց որոնց հնարավոր չէ պատկերացում կազմել ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ հասկացության մասին, /քանզի իմ 15-ամյա գործունեության ընթացքում փորձել եմ կանոնակարգել մեր գործունեությունը/:

1.ՍՓՅՈՒՌՔ

Ընդհանրապես շատ բարդ իրողություն է. այն ներկայացնում է մեկ ազգ, բայց ոչ մեկ մշակույթ, մեկ ազգ, բայց ոչ մեկ լեզու, մեկ էթնիկ, սփռված ինքնություն զուգակցված բազում այլ խմբային ինքնությունների հետ և այդ ամենը համադրելու, ձևավորելու և կազմակերպելու պարբերական անհրաժեշտություն:

2.ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾ

Հանրակրթություն և լրացուցիչ կրթություն, որով պայմանավորված են հասարակության որակը, համոզմունքները, իդեալները, արժեքները և սրբությունները:

Ի տարբերություն հանրակրթական դպրոցի հայկական լրացուցիչ կրթության դպրոց հաճախելը կամավոր է, ուրեմն ուսումը այստեղ պետք է կազմակերպել շատ գրավիչ և հաճելի մեթոդներով: Առաջին հերթին պետք է հարգանք ու ակնածանք առաջացնել սեփական լեզվի և մշակույթի նկատմամբ: Երեխան պետք է համոզված լինի, որ ուսումնասիրվող նյութը արժանի է ուշադրության և պետքական է: Հայ երեխան պետք է գա դպրոց, որպես տոնի, հաճելի հաղորդակցման, ուր իրեն սիրում են, հասկանում են, միշտ պատրաստ են օգնել: Հայկական դպրոցը, հայկական եկեղեցին կամ մշակութային կենտրոնը Սփյուռքում պետք է ընկալվեն ոչ միայն իրենց բուն բովանդակությամբ, այլ առաջին հերթին, որպես հայրենիքի խորհրդանիշ և ներկայացուցչություն, Հայաստանի յուրօրինակ մոդել:

Ռուսաստանում հայկական կրթությունը ճնշող տեսակարար կշռով կենտրոնացված է լրացուցիչ կրթության դաշտում, որը և մեր դիտարկման առարկան է: Որոնք են նրա տարբերակիչ առանձնահատկությունները:

1. Ռուսաստանի հայկական բնակչությունը Սփյուռքի մի յուրահատուկ խավ է, որը մոտ անցյալում եղել է Հայաստանի հետ նույն պետականության կազմում և չունի տարանջատման խոր, կարոտախտ ծնող տարրեր, ինչպես Եվրոպայում, ԱՄՆ-ում կամ այլուր:

2. Այստեղ ևս հայոց լեզուն զրկված է գործնական բոլոր գործառույթներից, և նրա պահպանումը զուտ հայրենասիրության և արմատներին նվիրվածության նշան է:

3. Բազմաշերտ հայերի մեծ մասը կարիք չունի մայրենի լեզվի դասընթացների: Դիտարկենք այդ շերտերը. ա) երկու դար առաջ գաղթածների (հին Սփյուռք) մեծ մասը կորցրել է ազգային ինքնագիտակցությունը և անդառնալի հեռացել արմատներից: բ) Վերջին շրջանի գաղթածների մեծ մասը (նոր Սփյուռք) շարունակելով մնալ ազգային՝ լեզվի և մշակույթի կրող, ընդհակառակը մտավախություն ունի տեղական լեզվի տիրապետման թերացման ուղղությամբ, և ձգտում է երեխաների և շրջապատի հետ շփվել բացառապես ռուսերենով, հետևաբար նա խուսափում է հայկական համայնքային միավորների մաս լինելուց: գ) Երրորդ շերտը պահպանում է մայրենի լեզուն իր ընտանիքի և բարեկամների շրջանակներում և կարիք չի զգում լրացուցիչ ուսուցման: դ) Եթե հաշվի առնենք նաև, որ Ռուսաստանում գործող հայկական հարյուրավոր հասարակական — քաղաքական կազմակերպությունները գիտակրթական ոլորտին սակավ են անդրադառնում, ապա պատկերը կդառնա լիովին ըմբռնելի:

Այսուհանդերձ, մեկօրյա հայկական դպրոցներ կազմակերպվում են, և հայոց լեզվի խմբակներ պարբերաբար բացվում ու վերաբացվում են հատուկենտ նվիրյալ բարերարների և անձնվեր ուսուցիչների շնորհիվ:

Կրթական գործառույթի բաղադրիչները.

ՈՒՍՈՒՑԻՉ

Սփյուռքի ցանկացած հայկական կրթօջախի՝ յուրաքանչյուր ուսուցչի աշխատանք՝ առօրյա զբաղմունք կամ հանապազօրյան հաց վաստակելու հնարավորություն լինելուց առաջ և հետո, նաև մեծ նվիրում է: Ոչ մեկը չի կարող կատարել այդ աշխատանքը, եթե զուրկ է բարձր հայրենասիրությունից, անսահման ոգևորությունից և անձնվեր մի հարգանքից սեփական ժողովրդի, նրա լեզվի ու սովորությունների նկատմամբ: Հայերենի բոլոր ուսուցիչները, ավարտելով իրենց ուսումը պետք է մտովին երդում տան սուրբ Մեսրոպ Մաշտոցին ուր էլ որ հայտնվեն, ինչ պայմաններում էլ անցկացնեն իրենց կյանքը, անընդհատ իրենց շուրջը սփռեն հայոց հինավուրց լեզվի անհամար բույրերն ու լույսերը:

ԱՇԱԿԵՐՏ

Ուսումնական ծանրաբեռնված հոգսերն ընդմիջելով կարելի է կշտանալ քնից, հանգստանալ ու խաղալ, դիտել բոլոր սպասված ֆիլմերն ու հաղորդումները, զրուցել և թափառել ընկերների հետ, մեկնել սիրած վայրեր... Այս դպրոցի պարապմունքներից երեխաները չպետք է հոգնեն: Մայրենի լեզվի դասերը նրանց համար պարտադրված, ուրեմն նաև ձանձրալի ուսումնական ծրագրեր չեն, այլ հաճույքի և ճանաչման հրճվանքի անբացատրելի մի միակցություն, որից չեն հագենում:

Սակայն պետք է կարողանալ համոզիչ դարձնել այդ դրույթը, որ ինչքան էլ քսաներորդ դարի գլոբալ մտածողության և վիրտուալ իրականության հարազատ մարդը ձգտում է աշխարհը իր հայրենիքը համարելուն և տիրապետում է տարբեր լեզուների, միևնույն է հիմք-լեզուն մեկն է՝ մայրենին, որով նա մտածում է իր անձնական, հոգու խնդիրների մասին: Եթե դու մտածում ես ռուսերեն, բայց ռուսական կենցաղը ամբողջապես չգիտես, ուրեմն բաց տեղեր են մնում և դու նահանջ ես ապրում, աղքատանում է հոգիդ: Եթե քո մայրը քեզ օրորոցային է երգել հայերեն և կերակրել է խավիծով ու դոշաբի հալվայով, դու ուրիշ ազգի լիարժեք անդամ լինել չես կարող:

Իսկ ամուր ու կենդանի պահելով հոգեվոր հիմքը, իր ազգայինից գնալով դեպի ընդհանուրը, մարդն իր մտածողության և հոգեկերտման ուղին, վերընթաց ճանապարհ է կանխորոշում:

Ովքեր են վերջապես դառնում մայրենի լեզվի կրթական օղակների հաճախորդներ.

ա) հին Սփյուռքի այն ներկայացուցիչները, որոնք դեռևս պահպանել են իրենց ազգային դրոշմը և քսանմեկերորդ դարասկզբին ազգային զգացումների նոր զարթոնք են ապրում:

բ) Նոր Սփյուռքի այն մասը, որը չի ուզում ձուլվել և ձգտում է ապահովել իր սերունդների շփումը հայկական աշխարհի հետ:

Նրանց դրդապատճառները նույնպես բազմազան են և շերտավորված: Մեր դիտարկմամբ, նրանք հիմնականում ունենում են հետևյալ նկատառումները.

ա) լեզուն սովորել կամեցողներ, բ) հայերենը կատարելագործել և նոր գիտելիքներ ստանալ կամեցողներ, գ) հայկական կյանքի հետ շփվող կամեցողներ, դ) հարազատ միջավայր որոնողներ և վերջապես՝ ե) ամոթից և ընդունված տենդենցներին տուրք տվողներ:

Ձախից աջ՝ Երազիկ Հարությունյանը («Փոքր Միհր», «Մեծ Միհր» դասագրքերի հեղինակը) և Կարինե Կատանյանը («Փոքր Հայկ» դասագրքի և «Սասունցի Դավիթ» այբբենարանի հեղինակը):

Նրանց նպատակները և ակնկալիքները ևս տարբեր են.

ա) կարդալու և գրելու հմտությունների ձեռքբերում, բ) հաղորդակցվելու տարրական ձևերի յուրացում, գ) բանավոր խոսքի զարգացում, հայ ժողովրդի պատմության և հայ մշակույթի մասին գիտելիքների ձեռքբերում դ) տարբեր գեղարվեստական խմբակների հաճախումներ կամ էլ՝ ե) պարզապես ընդհանուրից հետ չմնալու, ընթացքի մեջ գտնվելու ցանկություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ես սկսել եմ աշխատել Սփյուռքում 2005 թ-ից, 2008 թ. առաջին խորհրդաժողովից սկսած խոսում եմ միասնական ծրագրերի և դասագրքերի մասին, որպեսզի կարողանանք անկախ ամեն ինչից, աշակերտին ճիշտ տեսանկյունից և հայրենանպաստ դիրքորոշումից մատուցել մեր քաղաքակրթական արժեքները:

Երիտասարդներին և պատանիներին հայկական կրթական կառույցներում ներգրավելը մի այլ, բազմամաս հմտություն և կառուցակարգ է ենթադրում: Պարբերաբար, նորաձևությանը համընթաց, որոնվում են նոր մեթոդներ և ուղիներ: Տարբեր ժամանակակից խմբակների, ստուդիաների և ակումբների ստեղծման, նյութական և բարոյական խրախուսանքների ճանապարհով: Հիմնական աշխատանքը առաջին փուլում գերազանցապես ծնողներին է ուղղված, քանի որ վերջին հաշվով ազգային ավանդույթների և արժեքների նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում է ընտանիքում:

Մեթոդական գրականություն

- Մեծ պահանջ է զգացվում դասագրքերի, առձեռն համառոտ բառարանների, բանավոր խոսքի զարգացման ուսուցողական սկավառակների, մանկա-պատանեկան նկարազարդ երկլեզու (մեր դեպքում օրինակ՝ ռուս-հայերեն) հանդեսների:
- Դասագրքեր պետք է ստեղծել տարբեր տարիքային խմբերի համար հաշվի առնելով հոգեբանական, մտավոր և ֆիզիկական առանձնահատկությունները: Մանավանդ որ ձեռագիր և տպագիր տառերը այս աստիճան տարբերվում են: Յուրաքանչյուր դաս մեր խորին համոզմամբ պետք է բաղկացած լինի երեք մասից հայրենագիտական նյութ, կարդալու և գրելու հմտություններ, բանավոր խոսք: Քանի դեռ չկա ՀՀ պետական պատվերով և գիտական խորհրդով հրատարակված և երաշխավորված ուղեցույց, ամեն ինչ մնում է սիրողական մակարդակի վրա: Մեր խորին համոզմամբ, դասագրքաստեղծ խմբագրական խորհրդում անպայման պետք է ընդգրկվեն Սփյուռքի փորձառու մանկավարժներ:

Դասագիրքը պետք է կազմված լինի ամենակիրառական բառերից, ամենապարզ, գործածական նախադասություններից, հարց ու պատասխանի ձևով, առաջին, երկրորդ, երրորդ դեմքերի հստակ արտահայտություններից:

Դասը պետք է կազմված լինի եռամասն կաղապարով

1. գրագիտություն, լեզվական գիտելիքներ,
2. բանավոր խոսք, հայ գրականություն,
3. Հայրենագիտություն (պատմություն, հայրենիքի մասին զրույցներ, կենցաղային սովորություններ, ծեսեր ու բարքեր, հայկական մշակույթ):

Լեզվամտածողությունը ազգային երևույթ է և արժեք: Մայրենի լեզվի հետ ամենամակերեսային շփումն անգամ պետք է պարգևի հոգեկան ներդաշնակություն և բավարարվածություն:

3. ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

- Լեզու
- Սովորույթներ
- Ավանդույթներ
- Մշակույթ
- Ապագայի տեսլական
- Ընտրության հնարավորություն (աշխարհաքաղաքացիության միտումների նորաձևության մեր դարում, անգամ հայրենիքում մարդը կանգնած է ընտրության առջև):

4. ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՊԱՐԸ

- Հայաստանի Հանրապետություն
- Պատմական Հայաստան
- Արևմտյան Հայաստան
- Ծննդավայր

Հայրենիքը հո՞ղն է, մարդի՞կ, սովորույթնե՞րը, վարվելակե՞րպը, լեզու՞ն, մշակո՞ւյթը…պատկերացումներն անսահման են, բազմազան, գունագեղ ու պայծառ. խոսք, սովորություն, ավանդական կոլորիտ, վանքեր ու եկեղեցիներ, թանգարաններ ու հուշարձաններ, երգ ու ֆիլմ, պար և թատրոն, փողոց և հարևանություն, կենցաղ և երազանք:

5. ԱԶԳԱՅԻՆ ԻԴԵԱԼՆԵՐ

Մարդիկ անկասկած բազմաբնույթ, բազմատեսք են, և բնության մեջ կրկնություններ չեն լինում: Սակայն բնության և հասարակության մեջ լինում են ընդհանրություններ: Յուրաքանչյուր ազգի ներկայացուցիչ իր գեների բաղադրության մեջ կրում է իր ազգի պատմության ընթացքում խտացված փորձի, ցավի, ուրախության, հպարտության, մի խոսքով՝ դարերի ընթացքում ձևավորված ազգային բնավորության սաղմերը, որոնք ընդհանուր են նույն ազգի բոլոր ներկայացուցիչների համար: